



Վազգեն Սարգսյան

Ամենաթանկ պարգևը

Պողոս Սահակյանը հիվանդացել է: Ինքն է մեղավոր՝ յոթանասունհինգ տարեկանում իրեն քսանհինգ տարեկանի նման է պահում. այգին փորելիս սատր ջուրը խմել է քրտնած, ասել են կհիվանդանաս՝ խնդացել է. «49 թվականին, Միբիրում, գետն անցնելիս սատույցը կոտրվեց, ջուրն ընկա: Մի կերպ դուրս եկա, ուրիշ բան չէ՝ սապոգներիս միջի ջուրը թափեցի ու գնացի իմ ճամփով: Ի՞նչ եղավ...»:

Տղամարդու քիչ մնացած՝ որձաքարե տեսակից է Պողոս Սահակյանը: Քոքով մայր հողին ձուլված, զարմանալի կամքի, զարմանալի ուժի տեր, փշոտ, իրասածի, նույնքան էլ՝ զարմանալի նրբանկատ ու լավատես: Այդ լավատեսությունը հատկապես է զարմացնում. ախր, շատ դժվար կյանք է ապրել: Եղել են սարսափելի ժամանակներ, երբ սևին սև ասելու համար մարդը կյանքով է վարձահատույց եղել: Պողոս Սահակյանն այդ սարսափելի ժամանակների գոհերից է: Կյանքի լավագույն տարիները բանտերում ու արքտրում են անցել: Ինչե՞ր միայն չի քաշել: Մեկ է, էլի սևին սպիտակ ասել չի սովորել: Ու իր դժվար կյանքի համար չի փռշտանել: Չի տրտնջում: Միայն հայրաբար մեզ՝ հիմիկվաններիս, մի քիչ նախանձում է. «Լավ ժամանակներում եք ապրում»: Հանդիմանում է նաև. «Շատ եք առաջ գնացել՝ լավ եք արել: Մենակ թե բարձրացել, հողից կտրվել եք, հողին չեք ուզում տիրություն անել»:

Կյանքի մասին իր պատկերացումը մոտավորապես այսպիսին է. «Եկեղեցին, որով էսօր աշխարհով մեկ հպարտանում ենք, պայթեցնում էին: Ուրքներս մեր տաք թոնիրների մեջ՝ եկեղեցին պայթեցնողներին քթերիս տակ անիծում էինք՝ Ղազարյան Տոլակը մեջքը դեմ տվեց եկեղեցուն, կանգնեց՝ ով տղամարդ է, թող

եկեղեցուն մատով դիպչի: Եկեղեցին կանգուն մնաց: Որոշ ժամանակ անց Յուլակին տարան: Երբ մեջքը դեմ էր տալիս եկեղեցուն, Յուլակը գիտեր, որ իրեն կտանեն: Յուլակը աշխարհ եկավ, ճաք տվեց, անցավ, իսկ եկեղեցին կանգուն է: Կարող էր հակառակը լինել...»:

Հաճելի է լսել Պողոս Սահակյանին: Լավ է պատմում, առանց գույները թանձրացնելու, առանց մանրացնելու, խորհուրդներ չի տալիս, ինքը պատմում է, դու ինչպես կուզես՝

հասկացիր: Հիմի հիվանդ է, անկողնում պառկած: Բժիշկն արգելել է ծխել: Ծխում է ու մանր-մանր պատմում:

... Ասես, գետնի տակից բուսնեցին: Քսան-քսանմեկ տարեկան տղա էի: Սով էր: Լամպի շուշա էի տարել վերևի գյուղերը, փոխանակել ցորենի հետ, տուն էի դառնում: Գայլերի ոհմակի նման շրջապատեցին: Ղաչաղներ էին: Իրենց մասին շատ էի լսել, մարդն ու հավի ճուտը իրենց համար մի հաշիվ էին, գիտեի: Մի բոպեի մեջ տկլորացրին՝ գենք, հագուստ, սապոգ... Հիմի իրար մեջ որոշում են՝ ինձ սպանեն, թե՞ չէ: Չմեռ, սառնամանիք, մի տակ շապիկով, ոտաշորով տնկվել եմ ձյունների մեջ ու սպասում եմ: Մտքումս մահն արդեն ընդունել եմ, էլ վախ չկա: Որ չսպանեն էլ, գիտեմ, գելերի բաժին եմ դառնալու: «Սպանեք, պրծնեմ, ասացի, էլ ի՞նչ եք սպասում»: Կատվի խաղը՝ մկան մահը, հրացանը դեմ են արել ճակատիս՝ «Ո՞վ ես, որտեղի՞ց ես», հարցուփորձ են անում: «Արծվանիստցի եմ, Տիգրանի տղեն եմ, ասացի, հայ եմ, գյավուր եմ, սպանեք պրծնեմ»: Էս պահին իրենցից մեկը, թե՛ «Օհանի՞ Տիգրանի»: Մեջս ինչ-որ հույս շողաց: Հետո հույսս փոխվեց վախի: «Հա, կմկմացի, Օհանի թոռն եմ»: Էս իմացա: «Սրա շորերն ու ձին ետ տվեք», դառավ ղաչաղը ընկերներիս: Իրենց մեջ ղալաբալա սկսվեց: «Իմ» ղաչաղը պինդ էր: Իրենց միջի գլխավորը չէր, բայց պինդ էր: Իրերս ու ձին ետ տվին: «Պապդ թե կենդանի է, ասաց ղաչաղը, կասես՝ Նաբին քո լավությունը չի մոռացել»: Ու ոնց որ երազի նման հայտնվել էին, երազի նման էլ անհետացան: Նաբու դեմքն էլ երազի նման եմ հիշում, հոգնած-անհաղորդ դեմք ուներ, բայց երբ ղալաբալան սկսվեց, դեմքը սրվեց ու աչքերը փայլեցին: Հաստատ արունք կլիներ, թե ընկերները չգիջեին...

Պապս էդ դեպքից երեք տարի առաջ էր մահացել, ու Էդպես էլ ինձ համար մութ մնաց, թե ի՞նչ լավություն կարող էր արած լինել իմ ռանչպար պապը ղաչաղ Նաբուն, որ Նաբին չէր մոռացել... Միակ բանը, որ հաստատ էր, որ մինչև

գերեզման ապրելու պայմանով մեջս մտավ էն օրը, էս միտքն էր. ոչ մի բան աշխարհում հենց այնպես չի կորչում, ո՛չ մի բան: Էս խելքով էլ կյանքս ապրեցի: Հետո, էն օրից երեսուն տարի անց, մի դեպք պատահեց, ու ես համոզվեցի, որ ճիշտ եմ ապրել...

Պողոս քեռին նոր պապիրոս է կպցնում: Չի սպասում հարցնենք՝ ի՞նչ դեպք: Գիտի, որ մեզ հետաքրքիր է, շարունակում է.

... 36 թվականից էդ որոշմանը սպասում էի: Սպասում էինք: Ի՛նչ մարդիկ էին սպասում: Ո՛նց էինք սպասում: Աչքներս սառեց սպասելով: Սրտներս սառեց: Հոգիներս սառեց: Սպասում էինք... Պատերազմը սկսվելու վրա ուրախացա, կհավատա՞ք, ուրախացա: Պատերազմում կամ մարդավարի գոհվելու էի, կամ հերոսի կոչումով տուն էի դառնալու: Հաստատ: Պատերազմ չտարան՝ չվստահեցին: 1947-ին շատերի հետ ինձ էլ ազատեցին, մտածեցի՝ էս է... 48-ին նորից տարան. դեռ «անվստահելի» էի: Էլ սիրտ չէր մնացել սպասելու՝ սպասում էի: Ի՛նչ մարդիկ մեռան սպասելով... Հետո, արդեն ազատության մեջ էլ սպասում էի: Ու հիմի, գերագույն դատարանի որոշումը ձեռքիս, իջնում եմ աստիճաններով ու հավատս չի գալիս. ես արդարացված եմ: 36-ից մինչև 55 թվականը ոչ մի վայրկյան չեմ կասկածել, որ արդար եմ, բայց հիմի, էս թղթի կտորի վրա լացս գալիս է... Ես, ուրեմն, արդար եմ, տասնինը տարի շարունակ արդար եմ եղել, արդար եմ տառապել... Երնեկ չարդարացնեին, մտածում եմ, երնեկ էսպիսի որոշում կայացնեին՝ Պողոս Սահակյան, դու քո պատիժը արդարացի ես կրել, հիմի, Աստված քեզ հետ, ապրիր ոնց ուզում ես: Թե չէ հիմի էս թուղթն ի՞նչ անեմ, տանեմ-դնեմ մորս շիրմաքարի՞ն... Վերջին անգամ, մտածում եմ, վերջին անգամ շտապում եմ դուրս գալ դատարանի դռներից: Ի՞նչ իմանամ, թե ճակատագիրը ինչ հանդիպում է նախապատրաստել...

Դատարանի շենքի առաջ, վիզը ծուռ, օգնություն խնդրող հայացքով մի մարդ է կանգնած, որ շատ նման է... Չէ, մտածում եմ, նա էսքան խեղճացա՞ծ, հնարավոր չէ:

Բայց, դե, նույն աչքերն են, նույն շուրթերը, շատ է նիհարել, բայց դիմագծերը հո նո՞ւյնն են: Մտքումս հազար անգամ էս դեմքը շարդուխուրդ եմ արել, ո՞նց կարող եմ շփոթել: «Գալուկյա՞ն», ասացի, ու սիրտս թայրտաց: Հայացքը բարձրացրեց ու միանգամից ճանաչեց. «Պողո՞ս, բարև, Պողոս...»: Որ տաք-տաք երկաթը քուրայից հանես ու կոխես սառը ջրի մեջ՝ ի՞նչ թշնոց կբարձրանա՝ մեջս էդպիսի

թշուղ է ընկել: Դեմս, ախր, Գալուկյանն էր կանգնած ու քաղցր ժպտալով՝ ձեռքը ինձ էր մեկնել: Արմունկից բռնած՝ կողքի գարեջրատունը տարա:

Գարեջրատանը մարդ չկար: Նստեցինք դեմ-դիմաց: Գարեջուր պատվիրեցի: Մինչև գարեջուրը կբերեն, ձեզ պատմեմ, թե ով էր Գալուկյանը...

Գալուկյանին առաջին անգամ հանդիպեցի 1947 թվականին, արքայից վերադառնալուս երկրորդ թե երրորդ օրը, շրջկենտրոնի հատուկ բաժնում: Երեսունհինգ-քառասուն տարեկան, ցածրահասակ, էն ժամանակների համար ամենասովորական տիպ էր: Ինկուբատորից դուրս եկած ճտերի պես իրար նման էին շան որդիները: Դու կասեիր՝ երեխաս մահամերձ է, իրենք կասեին՝ կեցցե մայիսյան ապստամբությունը: Ես իր համար գոյություն չունեի: Գործս ծերից ծեր կարդաց ու որոշեց, որ՝ «Այս գործի տերը ժողովրդի մեջ ապրելու իրավունք չունի...»: Այդպես ես հայտնվեցի աշխարհից կտրված մի անանում, որ իրականում գյուղ էլ չէր. չորս տուն քրդեր էին ապրում: Ասես երկնքից իջել ու տիրացել էին անտեր ավերակներին: Երկրում կատարվածից այնքանով էին տեղյակ, որքանով ես՝ լուսնից: Էդ չորս տնով, ես էլ հետները՝ հինգ, հազար չորս հարյուր գլուխ ոչխար էինք պահում: Պլան կար, մթերում կար, խուզ ու ծին կար՝ գլուխ քորելու ժամանակ չունեինք: Աքսորի նման մի բան էր: Միակ մխիթարանքս էն էր, որ ամիսը մեկ-երկու անգամ գիշերով իջնում, մորս տեսնում ու բարձրանում էի: Աստված չաներ, թե Գալուկյանն իմանար: Մանավանդ որ մեր կողմերում շուտ-շուտ էր երևում: Իմ կարոտությունը չէր քաշում. սարերում լավ որս կար, ես էլ իր սեփական որսորդն էի: Հրացանն ինձ էր տալիս ու ինքը քնում: Ջարթնում էր, փնչացնում, որսն առնում ու գնում: Մի օր էլ եկավ, թե՛ «Պատրաստվիր, Պողոս, քեզ քաղաք են տանում»: «Ի՞նչ կա», հարցրի: «Էնտեղ կինանաս, ասաց, ինչ ունես--չունես հավաքիր»: Հավաքեցի: Իջանք: Ինքը՝ ձիով ետևից, ես՝ ոտքով, ունեցած-չունեցածս շալակած՝ առջևից: Ինձ էլի տանում էին՝ թե ինչի՞ համար, ինչքա՞ն ժամանակով, ո՞ր, վերադարձ կա՞ր, չկա՞ր՝ պարզ չէր: Տանում էին: Երկաթուղու կայարանը մեր գյուղին կպած էր: «Գալուկյան, ասացի, գիտես, մի ծեր մայր ունեմ, մի րոպեով մտնենք, տեսնեմ ու գնանք»: «Շատ կլինի, կթթվի վրեդ», ասաց: «Գալուկյան, խնդրեցի, ընդամենը մի րոպեով, ով գիտի, էլ մորս տեսնե՞մ-չտեսնե՞մ... Մարդ ես վերջիվերջո, խիղճ ունեցիր, միասին մտնենք ու դուրս գանք»: «Չէ, ասաց, պարոն Պողոս: Էնտեղ Էդպես եք, չէ՞, իրար դիմում»: Ձեռ էր առնում շան որդին, ոնց էր ձեռ առնում:

Համբերում էի: Ոտքերս, դու մի ասա, չէին համբերել, ոտքերս ինձ գյուղի ուղղությամբ էին տարել: Գալուկյանը կատաղեց: Ձին քշեց վրաս ու ատրճանակը դեմ արեց ճակատիս: Նայեցի աչքերին. ոչինչ չէին ասում, սառը արճճի կտորներ էին: Հասկացա՝ կկրակեր, ինքը առիթ էր փնտրում: «Փախուստը կանխելու համար» հեշ որ չէ՝ աստիճանի բարձրացում կատանար: Խաչն էլ էր իր ձեռքին, Ավետարանն էլ, ինչ ուզեր՝ կաներ: Մեջս դեռ պատիկ մի հույս կար: Քաղաքում, մտածում էի, քաղաքում, ո՞վ գիտի... Քաղաքում ասացին. «Ասում են՝ աշխատավոր չոբանների հետ խոսելու բան չունես, հա՞, աշխատավոր չոբանները տգետներ են... Դե, գնա խելոքների մոտ...»: Առաջին անգամ խոսելու համար էին տարել, հիմա էլ շխոսելու համար տարան: 1955 թվականին, երբ արտորից վերադարձա, ջրերն արդեն գուլավել էին, բայց հին սովորության համաձայն՝ գյուղում ինձանից խուսափում էին: Ես, որ երկար ժամանակ իրենց մեջ չէի ապրել, շատ պարզ ու սուր էի զգում. մարդիկ ի՞նչ վախկոտ, ստրկամիտ էին դառել: Անտանելի էր: Որքա՞ն ժամանակ էր պետք, որ էդ ստրկամտությունը ժողովրդի հոգուց վերանար... Արդարացումն ինձ, չէ՛, իմ արդարացումն իրենց՝ թղթի վրա գրված ձևով էր պետք: Մարդիկ ի՞նչ թղթամուլ էին դարձել... Ու հիմա, 1958 թվականի աշնանը, Գերագույն դատարանի որոշումը գրպանումս՝ նստած եմ գարեջրատանը՝ էն էլ ում՝ Գալուկյանի հետ աչք աչքի, շունչ շնչի. հիմի եկել է ժամանակը, որ թուղթը Գալուկյանի աչքը կոխեն, խփեն, ատամները փորը լցնեն. Նստել ու սառել եմ: Ախր, էնքան բան ունեմ ասելու, որ մեջս եղածը եկել, դեմ է առել կոկորդիս, խցանվել է ու ոչ մի կերպ չի պայթում: Շունչս կտրվում է: Գալուկյանն ինքը սկսեց. «Հետո՞, Պողոս, ի՞նչ կա, ի՞նչ չկա»: «Արդարացվել եմ, Գալուկյան, ասացի, էս Գերագույն դատարանի որոշումը, էս էլ ծանուցագիր՝ փող եմ ստանալու, օգնելու են նաև, որ տուն շինեն»: Որոշումը կարդաց-չկարդաց, ետ տվեց: Տնքաց: «Դա՛, արեց, դա՛... Իսկ ես, Պողոս, կործանվում եմ: Աշխատանքից էլ հեռացրին, կուսակցությունից էլ: Հիմա էլ դատի են տվել: Օգնիր, հա՞, Պողոս, Աստծո սիրույն...»: «Արդեն Աստծո՞ն ես հավատում, Գալուկյան, ասացի»: «Դե, խոսք է, ասում ենք, Պողոս ջան, շողոքորթեց, խնդրում են, աղաչում են, օգնիր, ցուցնունք տուր, որ էն տարիներին ես ձեզ հետ լավ եմ վարվել...»:

Աչքերիս մեջ նայելով՝ անամոթաբար էնպես էր խնդրում, ասես էդպես էլ եղել էր, ասես չօգնելն իմ կողմից մեծ ստորություն կլիներ: Հենց էդ պահին

խոսակցության հարմար տոն գտա: «Դա՛, արեցի, դա՛... Լավ չեն գործերը: Գալուկյան, հիշո՞ւմ ես՝ մեր սարերում ինչ լավ որս կար»: Ջարմացավ, փուշը թողեց: «Հիշում եմ, ասաց, Պողոս, դու էլ աննման որսորդ էիր»: «Դա՛, արեցի, դա՛... Որսի մսից խորոված էինք անում, ուտում-խմում-ուրախանում էինք, հիշո՞ւմ ես, Գալուկյան: Էն, էն աշխատավոր չոբաններն էլ ի՛նչ զարգացած, ի՛նչ տաղանդավոր մարդիկ էին, այ մարդ, շան որդիները: Չե՞ս հիշում... Որտեղի՞ց հիշես, Գալուկյան, հազար մարդու ես լավություն արել, ո՞ր մեկին հիշես...»:

Չէր խոսում: Ձեռքը բաժակին գցեց: Ձեռքը բռնեցի: «Սպասիր, ասացի, մի վռագիր, դեռ կխմես: Մի հարց եմ ուզում քեզ տալ, Գալուկյան, դու կիմանաս՝ բոզ ծնվո՞ւմ եմ, թե՞ դառնում...»: Չպատասխանեց, բայց մտքում, գիտեմ, անհծում էր Էն օրը, որ ատրճանակի յոթ գնդակն էլ գլխիս մեջ չդատարկեց: Թող անհծեր, նույն Գալուկյանն էր, հիմի մուկ էր դառել, բայց ջուրը տեսներ թե չէ, էլի ձուկ կդառնար:

Գարեջուրը խմեցի: «Գալուկյան, ասացի, մեկ էլ Էն օրն եմ հիշում, որ ինձ քաղաք էիր տանում, ասացիր՝ հիվանդ մայր ունես, Պողոս, մի բույեով մտնենք, տես, նոր գնանք»: «Ես չասացի, Պողոս, մոթմոթաց, դու ասացիր: Ես քեզ չէի կարող թողնել, ծառայություն էր, հասկանում ես...»:

Միջիս ումբը պայթեց: Տարիներ շարունակ կուտակված մաղձը Գալուկյանի գլխին թափեցի: Ներսս, սակայն, չզուլավեց, դեռ ինչ-որ բան ղլղբլղում էր: Գալուկյանը լուռ էր: Թե էս պատից ձեն դուրս եկավ՝ իրենից էլ դուրս եկավ: Չէր էլ վեր կենում՝ գնար: Ասենք՝ ո՞ր գնար, բաժակն էլ թե գլխովը տայի՝ չէր գնա. խնդիրք ուներ, դեռ հույսը չէր կորցրել: Նստեց, նստեց ու թե՛ «Պողոս, մոռանանք էդ մասին, անցած-գնացած պատմություններ են»:

Ոնց որ բզեզի բույնը փայտով խառնես: «Ի՞նչը մոռանանք, Գալուկյան, պայթեցի: Որ Արամ Վաչյանը երկու օր էր՝ մեռած էր ու թաղված չէր՝ մոռանա՞նք: Դազադագործը ղիսկ չէր անում դազադ շինել, գերեզման փորող չկար: Երկու օր հանգուցյալի տան դուռը բացող չեղավ՝ ո՞վ կհամարձակվեր: Արամ Վաչյանին «ազգի դավաճան» էիր սարքել: Իհարկե, դուք ազգի փրկիչ էիք, քիչ էր մնացել, հա՛, մեզ ազգովի Միբիր էիք քշում՝ հողը շատ, ջուրը շատ, դուք փրկիչ էիք ու Արամ Վաչյանը՝ դավաճան: Գիշերվա կեսին տանելու էիք, մարդը

որոշեց իր տան մեջ մեռնել՝ կախվեց թոնրատան օճորքից: Մոռանա՞նք,
Գալուկյան... Էս փողոցը գիտե՞ս ում անունով է... Դուրս գնա, գնա, կարդա:
Գիտե՞ս... Ախր, նրան էլ էիք դավաճան սարքել, մոռանա՞նք, Գալուկյան...»: Ինչ,
ի՞նչ պատասխանի, որ լավ լինի. «Է՛, Պողոս, ասաց, իզուր հոգիդ մի
փորփրի: Անցավ, գնաց: Ո՞ւմ են պետք քո հիշողությունները: Եղունգ ունես՝
գլուխդ քորի, Պողոս...»: Էլ չդիմացա: «Դուրս, գոռացի, կորիր աչքիցս, շան
որդի, դուրս...»:

Գլուխն ուսերի մեջ թաղած՝ Գալուկյանը դուրս եկավ գարեջրատնից: Նույն
պահին գարեջրավաճառ աղջիկը երկու բաժակ գարեջուր բերեց, դրեց դեմս ու
գնաց: Ես գարեջուր չէի ուզել, ի՞նչ իմացավ, որ ներսս վառվում էր: Խմեցի ու
մոտեցա իրեն՝ վճարելու: Չարմացա: Լաց էր լինում: Արցունքների միջից
ժպտաց: Փողը չվերցրեց: «Խնդրում եմ, ասաց, հայրիկ, մեծ բան չի, Էդ էլ իմ
կողմից պատիվ տալ համարեք, չգիտեմ, ինչ ուզում եք՝ համարեք»: Չարմացած
իրեն էի նայում: Հանկարծ հեկեկաց. «Չենց իմանամ՝ հայրս է խմել... Կներեք,
բայց ձեր խոսակցությանը ականջ էի դրել: Լավ արեցիք, Էն մարդն արժանի չէր
ձեզ հետ սեղան նստելու... Հորս էլ ախր, Էդպես տարան, ու հետ չեկավ
հայրս...»:

Աղջիկը չկարողացավ շարունակել... Տասնինը տարվա աքսորի ընթացքում աչք
թացած չկայի: Դուրս եկա գարեջրատնից, ու արցունքները գլորվեցին աչքերիցս:
Ու հոգիս Էնպես թեթևացավ: Կյանքիս ամենատխտոր ու ամենատրախ օրն էր
միաժամանակ: Էն երկու բաժակ գարեջուրը կյանքումս ստացած ամենամեծ
պարգևն է...

Չորս օր անց նամակ ստացա: Բաց արեցի ու զարմացա, արդարացման որոշումն
էր ուվփողի ծանուցագիրը. մոռացել, թողել էի գարեջրատան սեղանի վրա...

Հաճելի է լսել Պողոս Սահակյանին: Լավ է պատմում, առանց գույները
թանձրացնելու: Խորհուրդներ չի տալիս, ինքը պատմում է, դու, ինչպես ուզում ես,
հասկացիր: